ԳԱՅԱՆԵ ՄԱԿԱՐՅԱՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ

Ընթերցանությունը դիտվում է որպես կարևոր խնդիր ուսուցման մեջ: Կարողանալ կարդալ և ձգտումը դեպի այն, կարևոր պայմաններից է կրթված անձ լինելու համար: Ընթերցանության միջոցով մարդիկ ամբողջ կյանքում ստանում են նոր ինֆորմացիա: Այն ոչ թե սովորելու առարկա է, այլ մտածելուն, տրամաբանելուն ու սովորելուն օգնող գործիք: Ընթերցանությունը սովորողին ստիպում է կենտրոնանալ, մտածել ընթերցվող նյութի մասին, սովորել մտածելով ընթերցել և կառուցել կարդացածի իմաստը, որի արդյունքում ձևավորվում է քննադատաբար մտածող, խոհուն և տրամաբանող ընթերցող, քանի որ "քննադատական ընթերցանությունը և քննադատական մտածողությունը իրական պրակտիկայում աշխատում են միասին և շատ սերտորեն կապված են իրար հետ" (What Is Critical Thinking & Critical Reading, http://www.critical-reading.com/critical_reading.htm): "Քննադատական մտածողությունը հսկում է կարդացված նյութի ըմբռնումը, եթե ընթերցողը զգում է, որ իր հաստատումները անհեթեթ են կամ անվստահելի և ոչ հիմնավոր (քննադատական մտածողության), ապա նա ավելի մանրամասն է քննում, զննում տեքստը, ստուգելով իր հասկացածը (քննադատական ընթերցանություն)": Եթե ընթերցողը չի մտածում այն գաղափարների մասին, որոնք արտահայտվում են ընթերցվող հատվածում, ուրեմն իսկական ընթերցանություն տեղի չի ունեցել: "Ընթերցողը պետք է գիտակցաբար ջանք գործադրի կարդացածը հասկանալու, սեփական ընկալումը ապահովելու համար, այդ նպատակով նա կարող է օգտագործել որոշակի մեթոդներ և հնարներ ընթերցանության ընթացքում (Ռոջեր Ֆար, Մտածողության ստրատեգիաների զարգացում, 1988, Ամն, էջեր 2-3): Նա գիտակցաբար պետք է օգտագործի կարդացվելիք նյութի առանձնահատկությունները, որոնք նրան կօգնեն հասկանալ իմաստը: "Կարևոր է նաև, որ ընթերցող-սովորողը վերահսկի իր ընկալման ընթացքը և հասկանա, թե որտեղ էր կարդացածը իմաստալից, իսկ որտեղ իմաստը չհասկացվեց": Չհասկանալու դեպքում փորձել գործադրել մտավոր կարողություններ նյութի ընկալման համար: Այս ամենը նշանակում է, որ "ընթերցողը պետք է միշտ ջանա հասկանալու կարդացած մտքերի և գաղափարների իմաստը", ուշադրություն դարձնի ընթերցվող նյութի տեսակի վրա, տեքստում փնտրի իմաստը գտնելու հավելյալ բանալիներ: Նա պետք է գիտակցի սեփական չհասկանալը ու փորձի

նման դեպքում այլ գործողություններ կատարել. ասենք վերընթերցել չհասկացած հատվածը. և որ չկա լավ և վատ ընթերցող. այլ կա լավ և վատ ընկալող՝ (Ռոջեր Ֆար. Մտածողության ստրատեգիաների զարգացում.1988, Ամն. էջեր 1-3): "Քննադատաբար ընթերցողը միշտ կարևորում է ոչ միայն. թե ինչ է տեքստը ասում. այլ ինչպես է տեքստը այն ներկայացնում. մինչդեռ սովորական ընթերցողը կարդալիս աշխատում է հիշել փաստերը և այն վերարտադրել. կամ էլ ընդունել այդ փաստերի շուրջ արված մեկնաբանությունները. պասսիվորեն ընդունել այն ինֆորմացիան. ինչ տալիս է տեքստը. չփորձելով պարզել. թե այդ ամենը ինչպես է ներկայացվում" (Dan Kurland, 2000, Critical Reading and Critical Thinking – www.Critical reading.com; http://www.critical-reading.com/critical_reading.htm):

Քննադատական ընթերցանությունը ավելի հետաքրքիր և դյուրին դարձնելու նպատակով կարելի է սովորողին առաջարկել հետևյալ քայլերը՝ կարդալուց առաջ/ մինչև կարդալը

ա) առանձնացնել և ընդգծել. որն է տվյալ տեքստի կարդալու նպատակը

- ինֆորմացիայի ստանալը. հեղինակի գրածին ծանոթանալը. բառապաշարը զարգացնելը և հարստացնելը. թե ...

Այստեղ սովորողին կարելի է առաջարկել հետևյալ տիպի հարցեր

- ինչի՞ մասին եմ կարդալու
- ի՞նչ կարող է տեքստի վերնագիրը հուշել
- ո՞վ է հեղինակը (լսել է արդյոք սովորողը այդ հեղինակի անունը առաջ. և հիշում է
- ինչ՞ եմ սպասում այս գլուխը. պարագրաֆը կարդալիս
- ընթերցողը ծանո՞թ է նրա այլ գործերին,
- որո՞նք են այդ հեղինակի քաղաքական հայացքները և այլն. (Critical Reading:

A Guide Designed for His Year 1 Students by John Lye, Copyright John Lye 1996, 1997):

բ) մտովի փորձել կազմել տեքստի իմաստի կանխավարկածը (Ռոջեր Ֆար, Մտածողության ստրատեգիաների զարգացում, 1988, Ամն, էջեր1-3): Աչքերով թռուցիկ նայել վերնագրերը, ենթավերնագրերը, նկարազարդումները: Եթե բացակայում են վերնագրերը և նկարազարդումները, ապա կարդալ ամեն պարբերության առաջին տողերը, որպեսզի կարծիք կազմել ընդհանուր գլուխի մասին, ընդգծել գլուխի կամ պարագրաֆի բնութագրական, ինչպես ասենք երկարությունը և կազմվածքը, ընդգծելով կարևոր կետերը, որոնք տեքստում արտահայտված են ավելի ցայտուն տառերով կամ ենթավերնագրերով:

- Առանձնագրել, ինչն է կարևոր տվյալ տեքստում
- ինչի վրա հատուկ ուշադրություն դարձնել և ինչի վրա ոչ
- օգտագործել թեմայի վերաբերյալ ունեցած նախորդ իր գիտելիքները
- հարցնել - "Ինչ ես գիտեմ այս թեմայի վերաբերյալ"
- հիշել նախկինում կարդացածը այս թեմայի վերաբերյալ և եթե կարիք կա գրել հիշածը: Նայել նյութերը և նկարազարդումները այդ թեմայի վերաբերյալ
- ինչպիսին է տեքստի կառուցվացքը (Critical Reading Guide—A Guide Designed for His Year 1 Students by John Lye, Copyright John Lye 1996, 1997):

Կարդալու ընթացքում

Խոհուն, քննադատաբար ընկալող, ակտիվ ընթերցող ձևավորել նշանակում է, որ տեսնել ընթերցող, որը կարդալիս համեմատում է մտքերը, գաղափարները, վերլուծում դրանք, փորձում գտնել հակասությունները, հարցեր է տալիս, փաստերի ճշգրտությունում համոզվելու նպատակով կատարում փնտրումներ, դատողություններ անում: Ընդ որում նրա դատողությունները, մեկնաբանությունները չեն գտնվում կախյալ վիճակում այլ ենթադրություններից. նա փորձում է ճիշտ կողմնորոշվել և ճիշտ վարքագիծ դրսևորել կարդացած նյութի նկատմամբ, գնահատում նյութը իրեն հայտնի չափանիշներով: Սովորողի կողմից ընկալածը սեփական բառերով ձևակերպելու, ընթերցված նյութի նկատմամբ ցուցաբերած տարբեր արձագանքների և այլ ջանքերի շնորհիվ ստեղծվում է անձնական իմաստալից համատեքստ, որը նրան տանում է դեպի քննադատական վերլուծության ուղիները: Շատ կարևոր է, որ ընթերցելու ընթացքում դասավանդողը և սովորողները միասին խորհեն կարդացածի շուրջը դասավանդողը բարձրաձայն արտահայտի իր մտքերը, որպեսզի սովորողները տեսնեն նրա մտքերի տրամաբանական ընթացքը և սովորեն սեփական մտածողության մեջ օգտագործել այդպիսի գործընթացներ (Թեմփլ Չարլզ, Մերեդիթ Քուրթ և Սթիլ Ջինի, Ինչպես են երեխաները սովորում, 1997,ԱՄՆ, էջ 9): Կարդացված նյութի հիմնավոր յուրացումն ու խորը ընկալումն յուրաքանչյուր սովորողի համար անհատական և մնայուն երևույթ է, երբ տևակայվում է իմաստալից համատեքստային կառուցվածքում: Եվ պետք է ասել, որ բազմակի տեքստեր ընթերցելու անհրաժեշտությունը բավականին արդյունավետ հիմք է ստեղծում քննադատական մտածողության զարգացման համար և կարող է լինել նախապայման հմուտ ընթերցող դառնալու համար: Սովորողը կարդալիս պետք է փորձի մտովի պատկերել կարդացածը, վերահսկել իր սեփական ընկալումը, օգտագործել նմանատիպ թեմայի մասին իր ունեցած նախորդ գիտելիքները, փորձ վերլուծել, մեկնաբանել, մտածել քննադատաբար (Roger Farr, Developing reading skills, USA,1988): Այդպիսի

խորհող ընթերցողի ուշադրությունը կարելի է հրավիրել հետևյալ տիպի հարցերի վրա տեքստի բովանդակությունը ճիշտ հասկանալու համար.

- հատուկ մանրամասը կարդալ տեքստի կարևոր մասերը,
- բարձրաձայն կարդալ դժվար և ուշադրությանն արժանի հատվածները
- պատմել կարդացածը սեփական բառերով. չմոռանալով նշումներ կատարել
- կարդալիս կանգ առնել և հարցնել "Ինչ է ցանկանում ասել հեղինակը"
- վերադասավորել գլխի / պարագրաֆի առանձին հատվածներ
- բաց չթողնել այն կապերը տեքստի մեջ, որոնք տրամաբանորեն կապակցում են
  ա) պատճառ / հետևանք
  բ) պրոբլեմ / լուծում
- կանգ առնել, երբ չի ընկալվում կամ ընդունվում (հավանում) հեղինակի միտքը
- նշել անծանոթ ինֆորմացիան
- վերանայել սկզբնական մտածելակերպը նոր ինֆորմացիա ստանալուց հետո
- ուսումնասիրել լրացուցիչ նյութեր, եթե նոր ինֆորմացիան չի ընկալվում կամ բավարարում
- բաց չթողնել առանցքային նախադասությունները
- նորից կարդալ կարևոր հատվածները
- ընդգծել կարևոր հատվածները, տեղերը
- բաց չթողնել այն բառերը, որոնց վրա կառուցվում է տեքստի տրամաբանությունը

ինչպես "օրինակ", "վերջում", "նախ և առաջ", "այնուհետև","վերջապես"
(Ֆար Ռոջեր, Մտածողության ստրատեգիաների արգացում, ԱՄՆ, 1988, էջեր 3-4; (Critical Reading: Guide —A Guide Designed for His Year I Students by John Lye, Copyright by John Lye, 1996, 1997; What is critical reading, Dan Kurland's www.criticalreading.com):

Օգտակար է նաև լրացուցիչ այս տիպի հարցերը՝

- ինչու է՞ սա կարևոր
- ինչու է՞ հեղինակը սա պատմում
- բառի կամ արտահայտության օգտագործումը օգնում է պատկերացնել կամ զգալ ...
- ինչպես է՞ հեղինակը հուշում
- ո՞ր պահին հասկացվեց, որ ...

- ինչ՞ հասկացվեց, ինչն էր զարմանալի, հետաքրքիր (Ֆար Ռոջեր, Մտածողության ստրատեգիաների զարգացում, ԱՄՆ, 1988, էջեր 3-4)

Ընթերցողին կարդալու ընթացքում կարելի է խորհուրդ տալ անելու հետևյալ տիպի նշումներ

- ընդգծել հատվածի կարևոր մասերը
- ընդգծել բանալի արտահայտությունները և անծանոթ բառերը
- ընդգծել կարևոր գաղափարները
- գրել հարցեր
- գրել մեկնաբանություններ լուսանցքում տվյալ հատվածի վերաբերյալ
- գրել որևէ փորձ կապված տվյալ նյութի հետ
- նշել այն հատվածները, որոնք անհասկանալի են կամ էլ շփոթեցնող
- նշել այն աղբյուրներ, որ հեղինակը օգտագործել է (Critical Reading: Guide — A Guide Designed for His Year 1 Students by John Lye, Copyright John Jye 1996, 1997: What is critical reading, Dan Kurland's www.criticalreading.Com; Ֆար Ռոջեր, Մտածողության ստրատեգիաների զարգացում, ԱՄՆ, 1988, էջեր 3-5)

Կարդալուց հետո

Ընթերցելուց հետո սովորողին կարելի է առաջարկել հետևյալ լրացնող հարցեր/խորհուրդներ

Որոշել, արդյոք կարիք չկա վերընթերցել տեքստի առանձին հատվածները:

Կազմել կոնսպեկտ /եզրակացություն կարդացածի վերաբերյալ:

Կազմել հարցեր կարդացած տեքստի հիման վրա, այնուհետև պատասխանել:

Վերանայել գիտելիքները նոր ինֆորմացիան ստանալուց հետո:

Ընդգծել այն տեղերը, որոնք չեն համընկնում նախկինում եղած գիտելիքների և նոր ինֆորմացիայի միջև:

Կանոնակարգել կարևոր ինֆորմացիան:

Կապել եղած գիտելիքները նոր ինֆորմացիայի հետ:

Ընթերցածի իմաստը կառուցելիս, ընթերցողը պետք է մտովի պատկերի իրադարձությունները, պատկերները, կերպարները, ի մի բերի ամբողջ ընթերցված նյութը, ունեցած գիտելիքները և փորձառությունը: Լավ ընթերցողը հմտորեն միաձուլում է տեքստի ինֆորմացիան իր ունեցած գիտելիքի հետ կապված տվյալ թեմայի հետ (P. C.Burns: Betty D. Roe; Elinor P. Ross- Teaching Reading in Today's Elementary Schools, Printed in the USA,1996, p.13):

Ընթերցանությունը հանդիսանալով բարդ գործընթաց, սովորողից պահանջում է հետևողական և շարունակական աշխատանք, որը կարելի է իրականացնել միայն բազմակի տեքստեր ընթերցելու օգնությամբ և արդյունքը արագ զգացնել կտա: